ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/15

ք. Երևան «11» «05» 2026թ.

ՀՀ Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Միքայել Մամիկոնյան ԱՁ-ն, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեղեկատվական տեխնոլոգիաների սարքերի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր- գնացուցակի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնացուցակի չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնացուցակի համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ Ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված Ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 634000 (վեց հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է Պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 տեղեկատվական տեխնոլոգիաների սարքերի վերանորոգման ծառայություններիի դեպքում, մատուցված Ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն Պայմանագրով սահմանված առանձին տեսակի Ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված Ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված Ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնացուցակին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար Ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի Պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման Պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) Պայմանագրի (այսուհետ՝ Ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ Պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի Պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Վիճակագրական կոմիտե	Միքայել Մամիկոնյան ԱՁ
Կառավարական տուն 3	Ք. Երևան,Արաբկիր թ., Բաղրամյան 1 նրբ. 4, 24 բն.
ՀՎՀՀ 02507509	ՀՎՀՀ 81264818
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ֆասթ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011011013	Հ/Հ 2623059507981001
Գլխավոր քարտուղար	
Ա. Հայրապետյան----------	Մ. Մամիկոնյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«11» «05» 2026թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/15
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆԱՑՈՒՑԱԿ
առանձին տեսակի ծառայության մատուցման համար ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևով հաշվարկված միավորի գների

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Առանձին տեսակի ծառայության մատուցման համար հաշվարկված միավորի գները
Տեղեկատվական տեխնոլոգիաների սարքերի վերանորոգման ծառայություններ, այդ թվում՝		
1	Համակարգչի դիագնոստիկա, պրոֆիլակտիկա	3000
2	Համակարգչի MB նորոգում (ներառյալ պահեստամասերը)	7000
3	Համակարգչի MB փոխարինում (ներառյալ պահեստամասերը)	20000
4	Համակարգչի սնուցման սարքի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	4000
5	Համակարգչի/Նոթբուքի BIOS-ի վերածրագրավորում	5000
6	Համակարգչի սնուցման համակարգի փոխարինում (ոչ ստանդարտ mini power)	10000
7	Համակարգչի օպերատիվ հիշողության (RAM) DDR3 1333MHz 4GB (1x4GB) փոխարինում կամ նորի ավելացում	9000
8	Համակարգչի օպերատիվ հիշողության (RAM) DDR3 1600MHz 4GB (1x4GB) փոխարինում կամ նորի ավելացում	9000
9	Համակարգչի օպերատիվ հիշողության (RAM) DDR4 4GB (1x4GB) փոխարինում կամ նորի ավելացում	15000
10	Համակարգչի օպերատիվ հիշողության (RAM) DDR4 8GB 3200 MT/s փոխարինում կամ նորի ավելացում	30000
11	Համակարգչի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում կամ նորի ավելացում DDR3 8Gb	15000
12	Համակարգչի պրոցեսորի հովացման համակարգի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	5000
13	Մոնիտորի լամպի փոխարինում (ներառյալ լամպը)	10000
14	Մոնիտորի սնուցման սարքի վերանորոգում (ներառյալ պահեստամասերը)	4000
15	Մոնիտորի մայրական սալիկի անսարքության վերանորոգում (ներառյալ պահեստամասերը)	5000
16	Նոթբուքի պրոֆիլակտիկա	5000
17	Նոթբուքի դիագնոստիկա	2000
18	Նոթբուքի օպերացիոն հիշողության փոխարինում կամ նորի ավելացում DDR3 4Gb (ներառյալ պահեստամասը)	12000
19	Նոթբուքի օպերացիոն հիշողության փոխարինում կամ նորի ավելացում DDR3 8Gb (ներառյալ պահեստամասը)	15000
20	Նոթբուքի օպերացիոն հիշողության փոխարինում կամ նորի ավելացում DDR4 4Gb (ներառյալ պահեստամասը)	9000

21	Նոթբուքի օպերացիոն հիշողության փոխարինում կամ նորի ավելացում DDR4 8Gb (ներառյալ պահեստամասը)	25000
22	Նոթբուքի/համակարգչի SSD / SATA 2.5" սկավառակի փոխարինում կամ նորի ավելացում (առանց պահեստամասի)	8000
23	Նոթբուքի/համակարգչի SSD / SATA 2.5" սկավառակի փոխարինում կամ նորի ավելացում (ներառյալ պահեստամասը) Samsung 870 Evo 250gb	25900
24	Նոթբուքի/համակարգչի SSD / SATA 2.5" սկավառակի փոխարինում կամ նորի ավելացում (ներառյալ պահեստամասը) Samsung 870 Evo 500gb	55000
25	Նոթբուքի/համակարգչի SSD / M.2 սկավառակի փոխարինում կամ նորի ավելացում (առանց պահեստամասի)	10000
26	Նոթբուքի/համակարգչի SSD / M.2 սկավառակի փոխարինում կամ նորի ավելացում (ներառյալ պահեստամասը) Samsung SSD 980 250gb	39000
27	Նոթբուքի/համակարգչի SSD / M.2 սկավառակի փոխարինում կամ նորի ավելացում (ներառյալ պահեստամասը) Samsung SSD 980 500gb	65000
28	Նոթբուքի սնուցման սարքի վերանորոգում (ներառյալ պահեստամասերը)	8000
29	Նոթբուքի ստեղնաշարի փոխարինում (ներառյալ պահեստամասը)	18000
30	Նոթբուքի վնասված էկրանի փոխարինում, (ներառյալ պահեստամասը)	45000
31	Նոթբուքի մայրական սալիկի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	20000
32	Նոթբուքի վնասված բնիկների փոխարինում (ներառյալ պահեստամասերը)	10000
33	Նոթբուքի հովացման համակարգի կարգաբերում	8000
34	Նոթբուքի մարտկոցի փոխարինում (ներառյալ պահեստամասը)	25000
35	Նոթբուքի վնասված պատյանի փոխարինում (ներառյալ պահեստամասերը)	20000
36	Սկաների դիագնոստիկա, պրոֆիլակտիկա	3000
37	Սկաների լամպի փոխարինում ներառյալ լամպը Ա4	8000
38	Սկաների սնուցման սարքի վերանորոգում (ներառյալ պահեստամասերը)	4000
39	Սկաների մայրական սալիկի անսարքության նորոգում (ներառյալ պահեստամասերը)	8000
40	Լազերային տպիչ սարքի դիագնոստիկա, պրոֆիլակտիկա	5000
41	Բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի դիագնոստիկա, պրոֆիլակտիկա	5000
42	Լազերային տպիչ սարքի լազերային բլոկի փոխարինում (ներառյալ պահեստամասերը)	15000
43	Լազերային տպիչ սարքի ֆորմատորի փոխարինում, Canon / HP	45000
44	Լազերային տպիչ սարքի մայրական սալիկի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	9000
45	Լազերային տպիչ սարքի մեխանիզմի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	8000
46	Լազերային տպիչ սարքի վառարանի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	10000
47	Լազերային տպիչ սարքի քարտրիջների նորոգում, վերականգնում (ներառյալ պահեստամասերը)	4000
48	Լազերային տպիչ սարքի քարտրիջի կարատրոնի փոխարինում ներառյալ կարատրոնը	4000
49	Լազերային տպիչ սարքի թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ ռետինե լիսեռը	4000
50	Լազերային տպիչ սարքի վառարանի ջերմատաքացուցիչի փխարինում ներառյալ վառարանի ջերմատաքացուցիչը	10000
51	Լազերային տպիչ սարքի վառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ թերմոժապավենը	8000
52	Լազերային տպիչ սարքի սկանավորող բլոկի փոխարինում ներառյալ սկանավորող բլոկը	8000
53	Լազերային տպիչ սարքի քարտրիջների լիցքավորում ներառյալ տոները HP LJ /1200/, HP LJ /M428dw, M404dn MFP/HP MFP M225 rdn, Canon MF4410, HP1505, P1005, P1102	5000

54	Lexmark լազերային տպիչի նորոգում՝ (ներառյալ պահեստամասերը) (X363DN, M310 1200dpi, C530 dn, M310 1200dpi, E260D, W850N)	15000
55	Հոսանքի անխափան սնուցման սարքի 600/800 VA (UPS) նորոգում (ներառյալ պահեստամասերը)՝ առանց մարտկոցի	8000
56	Հոսանքի անխափան սնուցման սարքի 600/800 VA (UPS) նորոգում (ներառյալ պահեստամասերը)՝ մարտկոցի փոխարինում	12000
57	Հոսանքի անխափան սնուցման սարքի 1200/1500 VA (UPS) նորոգում (ներառյալ պահեստամասերը)՝ առանց մարտկոցի	20000
58	Հոսանքի անխափան սնուցման սարքի 1200/1500 VA (UPS) մարտկոցի փոխարինում	40000
59	Համակարգչի/Նոթբուքի (HDD) ինֆորմացիայի վերականգնում	50000
60	Սերվերի սնուցման սարքի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	25000
61	Սերվերի դիագնոստիկա, պրոֆիլակտիկա	10000
62	Սերվերի BIOS -ի վերածրագրավորում	20000
63	Սերվերի սնուցման համակարգի փոխարինում	80000
64	Սերվերի պրոցեսորի հովացման համակարգի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	30000
65	Սերվերի հովացման համակարգի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	20000
66	Սերվերի հոսանքի անխափան սնուցման սարքի (UPS) նորոգում (ներառյալ պահեստամասերը)՝ 16 մարտկոցի փոխարինում	260000
67	Սերվերի հոսանքի անխափան սնուցման սարքի (UPS) նորոգում (ներառյալ պահեստամասերը)՝ 8 մարտկոցի փոխարինում	130000
68	Սերվերի հոսանքի անխափան սնուցման սարքի APC SRT 3000XLT (UPS) նորոգում (ներառյալ պահեստամասերը)՝ առանց մարտկոցի	50000
69	Սերվերի հոսանքի անխափան սնուցման սարքի APC SMARTRM5000VA/4500W (UPS) նորոգում (ներառյալ պահեստամասերը)՝ առանց մարտկոցի	50000
70	Սերվերի Հոսանքի անխափան սնուցման սարքի APC Easy On-Line 3kva/2400w, Rackmount 2U, 230V, 6xIEC C13 (UPS) նորոգում (ներառյալ պահեստամասերը)՝ առանց մարտկոցի	80000
71	Սարք էլեկտրոնային, տվյալների պահպանման Storage Syst NetApp	50000
72	Ենթահամակարգ տվյալների պահպանման (հիմնական) HPE Nimble Storage HF40 Adaptive Dual Controller 10GBASE-T 2-port Base Array	50000
73	Ցանցային բաշխիչ սարքի (SWICH) նորոգում (ներառյալ պահեստամասերը)	10000
74	Պրոյեկտորի նորոգում (ներառյալ պահեստամասերը)	30000
75	Պլանշետների վերանորոգում՝ սիմ սլոտ (ներառյալ պահեստամասերը)	10000
76	Պլանշետների վերանորոգում՝ լիցքավորման սլոտ (ներառյալ պահեստամասերը)	10000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011013
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Միքայել Մամիկոնյան ԱՁ
Ք. Երևան, Արաբկիր թ., Բաղրամյան 1 նրբ. 4, 24 բն.
ՀՎՀՀ 81264818
«Ֆասթ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2623059507981001
Մ. Մամիկոնյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 11 » «05» 2026թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/15
ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ. դրամ

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	Ծառայության									
			I եռ		II եռ.		III եռ.		IV եռ. /մինչև դեկտեմբերի 25-ը/		Ընդամենը	
			քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակը	գինը /հազ. ՀՀ դրամ/
50311220/1	Տեղեկատվական տեխնոլոգիաների սարքերի վերանորոգման ծառայություններ	դրամ			1	314.1	1	466.9	1	634.0	1	634.0

**գնման ժամանակացույցը ներկայացված է աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011013
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Միքայել Մամիկոնյան ԱՁ
Ք. Երևան,Արաբկիր թ., Բաղրամյան 1 նրբ. 4, 24 բն.
ՀՎՀՀ 81264818
«Ֆասթ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2623059507981001
Մ. Մամիկոնյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 11 » «05» 2026թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/15
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության												
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
1	50311220/1	Տեղեկատվական տեխնոլոգիաների սարքերի վերանորոգման ծառայություններ					314.1	314.1	466.9	466.9	466.9	634.0	634.0	634.0	634.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011013
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Միքայել Մամիկոնյան ԱՁ
Ք. Երևան,Արաբկիր թ., Բաղրամյան 1 նրբ. 4, 24 բն.
ՀՎՀՀ 81264818
«Ֆասթ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2623059507981001
Մ. Մամիկոնյան -----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 4
« 11 » «05» 2026թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/15
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
«11» «05» 2026թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/15
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 5
« 11 » «05» 2026թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2026/15
ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ.
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

միջև «--» 20 թ. կնքված ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.